ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1571 21.08.2015թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի օգոստոսի 14-ին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Նաիրիի ՁՊՎ և արձանագրվել էին հետևյալ թերությունները՝

- ՁՊՎ-ն գտնվում էր շատ փոշոտ վիճակում:
- Սանհանգույցը գտնվում էր կեղտոտ վիճակում և հենց կեղտի վրա չոր քլոր էր լցված:
- ՁՊՎ-ի բուժսենյակի սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում:

Խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՈՒՏՔ № 3952
26 08 2015

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-3070 <<17>> 09 2014թ.

Ձեր 21.08.2015թ. թիվ 2621/1571 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2015թ. օգոստոսի 14-ին ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնի ՁՊՎ կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն արդեն իսկ վերացվել են:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ